Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի դուդուկի դասարանի ուսուցիչ

Իվանե Մկրտչյանը ծնվել է 1980 թվականին, Թբիլիսիում:1996 թվականին ավարտել է Թբիլիսիի թիվ 116 դպրոցը, այնուհետև կրթությունը շարունակել է «Նիբլիա» բժշկական քոլեջում, որն ավարտել է 1999 թվականին:

Սովորելու տարիներին աշխատել է «Հայք» ազգագրական երգի-պարի համույթում:

2012 թվականից արտահաստիքային կարգով աշխատել է «Հայարտուն» կենտրոնի դուդուկի ուսուցման խմբում:

2013 թվականից աշխատանքի է անցել Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում որպես

դուդուկի դասարանի ուսուցիչ:

2012 և 2014 թվականներին մասնակցել է Երևանում անցկացվող դուդուկի համահայկական փառատոներին:

2016 թվականին արդեն իր աշակերտի՝ Ալեքս Բազոյանի հետ մասնակցել է համահայկական փառատոնին և արժանացել փառատոնի գալա-համերգում ելույթ ունենալու պատվին: Ամուրի է: